# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՆՎԵՐ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՆՈՒԷՐ ՄԽԻԹԱՐԵԱՆ, ՈՐ Ի ԿԻԵՒ, ՈՒԿՐԱԻՆԱ

Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթեանից գոհունակութեամբ տեղեկացանք Տիրախնամ թեմին եւ հաւատաւոր մեր ժողովրդին մատուցած Ձեր ծառայութեանց մասին, որոնք բարի անուն եւ ճանաչում են բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ:

Ցարգարժան պրն Մխիթարեան, արդարեւ, մեծ աւանդ ունէք ուկրաինահայ կեանքում՝ ինչպէս Ուկրաինայի Բարձրագոյն Ռադայի պատգամաւոր, այնպէս եւ անուանի գործարար ու բարեգործ հայորդի:

Բարձր ենք գնահատում, որ Դուք յամենայնի օգնական ու աջակից էք Ուկրաինայի հայոց թեմի բարեջան առաջնորդին եւ հոգեւոր դասին՝ ի խնդիր Մայր Եկեղեցու փիրաւանդ առաքելութեան արդիւնաւոր իրականացման: Ձեր հեղեւողական ջանքերի ու ներդրած նիւթական միջոցների շնորհիւ Տիրախնամ թեմի Սուրբ Աստուածածնի Վերափոխման եկեղեցին այսուհետ ամբողջական ու բարեզարդ իր տեսքով պիտի ծառայի աստուածասէր մեր ժողովրդին՝ շարունակելով համախմբել եւ հաւատի ճանապարհով առաջնորդել Եւրոպայի ամենահին հայկական գաղթօջախներից մէկի՝ Լուվի հայ համայնքը: Աղօթատան սրբազան յարկի ներքոյ բարեպաշտ հայորդիները մշտապէս երախտագէտ հոգով պիտի յիշեն Ձեզ եւ աղօթքով Ամենախնամ Բարձրեալի օրհնութիւնը հայցեն պատուարժան հայորդուդ բոլոր բարի գործերին ու նախաձեռնութիւններին:

Ամենայն Հայոց Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները եւ, սիրով ընդառաջելով առաջնորդ Սրբազանի ազնիւ խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Մայր Եկեղեցու

**ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ**

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Տիրոջ հանապազ օրհնութեամբ միշտ եռանդուն ու կորովաշատ, շարունակէք Ձեր ծառայութիւնը բերել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն ու հաւատացեալ ժողովրդին:

Թող Բարին Աստուած Իր Հայրական հովանու ներքոյ քաջառողջ ու երջանիկ պահի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ արժանացնելով երկնային բիւր պարգեւների: «Որ նիւթէ զբարիս, խնդրէ շնորհս բարութեան»:

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնք. ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 23-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 118